

**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**  
**ՑԱՄԱՔԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**  
**ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ**  
**ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

Առողջ և անվտանգ պայմանների ապահովման պարտականությունն ամբողջ ծավալով կրում է ուղևորատար տրանսպորտային ընկերության տնօրինությունը: Ցամաքային ուղևորատար տրանսպորտի գործունեությամբ կազմակերպման ժամանակ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են ըստ երկրում համաճարակային իրավիճակի զարգացման փուլերի: Ներկա փուլում ցամաքային ուղևորատար տրանսպորտի ոլորտում գործում են ստորև ներկայացված կանոնները:

**ԿԱՆՈՆԱՎՈՐ ԵՎ ՈՋ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ**

**1. Ընդհանուր կանոններ**

- 1) Կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) նշանակում է կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման միջոցառումների պատասխանատու (այսուհետ՝ Պատասխանատու), որն ապահովում է՝
  - սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների և հիգիենայի նորմերի պահպանման նկատմամբ պատշաճ հսկողությունը և կանոնների համար անհրաժեշտ պարագաների, նյութերի ու հարմարությունների առկայությունը,
  - առնվազն ախտահանումների և աշխատողների առողջական վիճակի մասին գրանցումների վարումը համապատասխան գրանցամատյանում՝ համաձայն սույն որոշման Հավելված 19-ի:
- 2) Պետք է հնարավորինս ձեռնպահ մնալ կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի աշխատողներին աշխատանքի ներգրավելուց՝ պահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված կանոնները: Գործատուն հավաստիանում է իր աշխատակցի՝ կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբում գտնվելու մասին աշխատողի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթի հիման վրա: Բարձր ռիսկային խմբի մեջ ներառված են՝
  - ա. ընկճված իմունային համակարգ ունեցող անձինք,
  - բ. 65 տարեկան և բարձր տարիքի անձինք,
  - գ. քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք (շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքային քրոնիկ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, սրտի քրոնիկ անբավարարություն, երիկամների քրոնիկ հիվանդություն, լյարդի քրոնիկ հիվանդություն (հեպատիտ), քրոնիկ նյարդաբանական հիվանդություն (Պարկինսոնի հիվանդություն, ցրված սկլերոզ (MS), ուղեղային կաթված տարած),
  - դ. շաքարային դիաբետ ունեցող անձինք:

- 3) Արգելվում է տրանսպորտային միջոցում կանգնած ուղևորների փոխադրումը՝ բացի 9 մետրից ավել երկարություն ունեցող տրանսպորտային միջոցների: Տրանսպորտային միջոցներում ուղևորների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել նստելու համար հատկացված տեղերի ընդհանուր թվաքանակին, ընդ որում՝ արգելվում է հավելյալ ինքնաշեն նստատեղերի ավելացումը: 9 մետրից ավելի երկարություն ունեցող տրանսպորտային միջոցներում կանգնած ուղևորների միջև պահպանվում է առնվազն 1 մետր հեռավորություն:
- 4) Կազմակերպությունն ապահովում է աշխատողներին դիմակներով, միանգամյա օգտագործման անձեռոցիկով և ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչով:
- 5) Ուղևորափոխադրող բոլոր տրանսպորտային միջոցների մուտքի մոտ պարտադիր տեղադրվում են ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչներ:
- 6) Կազմակերպությունն ապահովում է բոլոր տրանսպորտային միջոցներում վճարման համար հատուկ արկղեր կամ այլ հարմարեցված տարաներ՝ կանխիկ փողի հետ շփումը հնարավորինս նվազեցնելու նպատակով:
- 7) Կազմակերպությունն ապահովում է անվտանգ վարվելականոնների և սանիտարահամաճարակային անվտանգության նորմերի վերաբերյալ աշխատակիցների և ուղևորների պատշաճ իրազեկումը, այդ թվում՝ տեսանելի վայրերում պաստառներ փակցնելու և/կամ այլ նախընտրելի միջոցներով՝ հիմք ընդունելով սույն որոշման հավելված N 18-ը: Շահագործվող բոլոր ուղևորափոխադրող տրանսպորտային միջոցներում ուղևորներին տեսանելի հատվածներում պարտադիր փակցվում են տեղեկատվական թերթիկներ:

## **2. Ավտոկայարանային տարածքների կազմակերպումը**

- 1) Բաց ավտոկայանների կամ տրանսպորտային միջոցների հավաքակայանների տարածքում բացառվում են մարդկանց կուտակումները: Տարածքներում առկա նստարանները և ընդհանուր օգտագործման գույքը ենթակա են ախտահանման առնվազն օրը 2 անգամ:
- 2) Սպասասրահները, սանհանգույցները և սննդի կետերը պարտադիր կերպով պարբերաբար ախտահանվում են՝ նվազագույնը օրը 2 անգամ:
- 3) Ապահովվում են ձեռքերի լվացման հնարավորություններ՝ հոսող տաք և սառը ջրով, արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներով (դրա անհնարինության դեպքում՝ անմիջապես ախտահանման հնարավորությամբ), օճառով:

## **3. Տրանսպորտային միջոցների ախտահանումը**

- 1) Տրանսպորտային միջոցները ենթարկվում են խորքային ախտահանման օրական նվազագույնը 2 անգամ, որից մեկը՝ պարտադիր նախաուղերթային հատվածում: Ախտահանման ենթակա են տրանսպորտային միջոցի սրահի բոլոր մակերեսները: Ախտահանումն իրականացվում է՝ համաձայն Առողջապահության նախարարի 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման նպատակով՝ օջախների, հանրային սննդի օբյեկտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ուղևորների փոխադրման ավտոտրանսպորտային միջոցների ախտահանման միջոցառումների մեթոդական ուղեցույցը և ալգորիթմները, անհատական պաշտպանության միջոցների ռացիոնալ օգտագործման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 977-Ա հրամանի:

- 2) Յուրաքանչյուր երթուղու ավարտին (երկար տարածությունների և երկարատև՝ ավելի քան 3 ժամ տևողությամբ երթուղիների ժամանակ՝ նաև ընթացքում) ուղևորներին իջեցնելուց հետո իրականացվում է սրահի օդափոխություն, դռների բռնակների, նստարանների արմնկակալների (միջքաղաքային ավտոբուսներում նաև ծալովի սեղանիկների, անվտանգության գոտիների ամրակների, անհատական կառավարման վահանակների (լուսավորության, օդափոխության, ուղեկցողին կանչելու և այլն), նստելատեղերի, անհատական տեսամոնիտորների պլաստմասե/մետաղյա/ կաշվե և այլ մասերի, սանհանգույցի առկայության դեպքում՝ նաև դրա կանխարգելիչ ախտահանում ախտահանիչ անձեռոցիկներով (կամ ախտահանիչ միջոցների լուծույթներով) շփման կամ ցողման եղանակով:
- 3) Յուրաքանչյուր օրվա ավարտին իրականացվում է տրանսպորտային միջոցների եզրափակիչ ախտահանում մասնագիտացված կազմակերպությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: Տրանսպորտային միջոցի սրահի և բոլոր աղտոտված գոտիների եզրափակիչ ախտահանման ժամանակ օգտագործվում են՝
  - մեկանգամյա պաշտպանիչ զգեստ,
  - մեկանգամյա ձեռնոց,
  - դիմակ, պաշտպանիչ ակնոց կամ դեմքի վահանակ,
  - փակ կոշիկ կամ բախիլներ՝ ցայտելու բարձր ռիսկի ժամանակ կամ կենսաբանական հեղուկներով խիստ աղտոտված մակերեսների ժամանակ,
  - անջրանցիկ պարկեր թափոնների համար:
- 4) Մաքրման համար չի օգտագործվում սեղմված օդ և/կամ ջուր ճնշման տակ, ինչպես նաև այլ մեթոդներ, որոնք կարող են առաջացնել վարակիչ նյութի ցայտում կամ տարածում աերոզոլի տեսքով: Փոշեկուլ օգտագործվում է միայն ճիշտ իրականացված ախտահանումից հետո:
- 5) Մաքրման և ախտահանման ավարտից հետո պաշտպանիչ հագուստը, կոշիկը, անհատական պաշտպանության միջոցները, մաքրման պարագաները հավաքվում են մակնշված բաքերի կամ պարկերի մեջ դրանց ախտահանումն իրականացնելու համար:

#### **4. Վարորդների համար կանոններ**

- 1) Իրականացվում է վարորդների ջերմաչափում հեռավար կամ անհատական օգտագործման ջերմաչափով օրական առնվազն 2 անգամ, որոնցից մեկը՝ աշխատանքի ներկայանալիս: Վարվում է ջերմաչափման գրանցամատյան՝ համաձայն սույն որոշման Հավելված 19-ի: Ջերմություն ունենալու դեպքում վարորդներին չի թույլատրվում դուրս գալ երթուղի, և այդ մասին անհապաղ տեղեկացվում է ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ՝ զանգահարելով 8003 համարով:
- 2) Վարորդները պարտադիր կրում են դիմակ, որոնք փոխվում են 3 ժամը մեկ պարբերականությամբ:
- 3) Վարորդների հանգստի և սնվելու համար ապահովվում են առանձնացված տարածքներ՝ ապահովելով միմյանց միջև 1.5-2 մետր սոցիալական հեռավորություն:

#### **5. Ուղևորների համար կանոններ**

- 1) Պարտադիր է կանգառում դիմակ կրելը: Բացառվում է ուղևորների նստեցումը և տրանսպորտային միջոցի սրահում ուղևորների առկայությունն՝ առանց նրանց կողմից դիմակ կրելու:
- 2) Տրանսպորտային միջոց նստելուց ուղևորները պարտադիր ախտահանում են ձեռքերը ալկոհոլային հիմքով ախտահանիչ միջոցներով:

- 3) Տրանսպորտային միջոցից օգտվելիս անհրաժեշտ է ունենալ մանրադրամ ուղևորավարձի չափով՝ հնարավորինս բացառելով մանր վերադարձնելու անհրաժեշտությունը:
- 4) Երկարատև երթուղիների ժամանակ խմելու ռեժիմի կազմակերպման համար օգտագործվում է միայն ջուր անհատական տարանների մեջ կամ մեկանգամյա սպասք: Իրականացվում է օգտագործված մեկանգամյա սպասքի, ինչպես նաև անհատական պաշտպանության միջոցների, դիմակների, ախտահանիչ անձեռոցիկների հավաքում մեկանգամյա օգտագործման հերմետիկ փակվող պլաստիկ ծրարների/տոպրակների մեջ, որոնք աղբարկղի բացակայության դեպքում տեղավորվում են բեռնախցիկում՝ ժամանման վայրում հեռացնելու:

## **ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ**

### **1. Ընդհանուր կանոններ**

- 1) Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորների փոխադրումների գործունեություն իրականացնող անձինք (լիցենզավորված իրավաբանական և ֆիզիկական անձինք) (այսուհետ՝ Կազմակերպություն) նշանակում է կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման միջոցառումների պատասխանատու (անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման միջոցառումների պատասխանատուն հանդիսանում է վերջինս) (այսուհետ՝ Պատասխանատու), որն ապահովում է՝

- սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների և հիգիենայի նորմերի պահպանման նկատմամբ պատշաճ հսկողությունը և կանոնների համար անհրաժեշտ պարագաների, նյութերի ու հարմարությունների առկայությունը,

- առնվազն ախտահանումների և աշխատողների առողջական վիճակի մասին գրանցումների վարումը համապատասխան գրանցամատյանում՝ համաձայն սույն որոշման Հավելված 19-ի:

- 2) Պետք է հնարավորինս ձեռնպահ մնալ կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի աշխատողներին աշխատանքի ներգրավելուց՝ պահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված կանոնները: Գործատուն հավաստիանում է իր աշխատակցի՝ կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբում գտնվելու մասին աշխատողի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթի հիման վրա: Բարձր ռիսկային խմբի մեջ ներառված են՝

ա. ընկճված իմունային համակարգ ունեցող անձինք,

բ. 65 տարեկան և բարձր տարիքի անձինք,

գ. քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք (շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքային քրոնիկ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, սրտի քրոնիկ անբավարարություն, երիկամների քրոնիկ հիվանդություն, լյարդի քրոնիկ հիվանդություն (հեպատիտ), քրոնիկ նյարդաբանական հիվանդություն (Պարկինսոնի հիվանդություն, ցրված սկլերոզ (MS), ուղեղային կաթված տարած),

դ. շաքարային դիաբետ ունեցող անձինք:

- 3) Ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցում արգելվում է վարորդի կողքին ուղևորի նստեցումը:
- 4) Կազմակերպությունն ապահովում է աշխատողներին դիմակներով, միանգամյա օգտագործման անձեռոցիկով և ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչով:
- 5) Ավտոտրանսպորտային միջոցները պարտադիր ապահովվում են ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչներով և մեկանգամյա օգտագործման թաց անձեռոցիկներով:
- 6) Կազմակերպությունն ապահովում է անվտանգ վարվելականոնների և սանիտարահամաճարակային անվտանգության նորմերի վերաբերյալ աշխատակիցների և ուղևորների պատշաճ իրազեկումը, այդ թվում՝ տեսանելի վայրերում պաստառներ փակցնելու և/կամ այլ նախընտրելի միջոցներով՝ հիմք ընդունելով սույն որոշման հավելված N 18-ը: Շահագործվող բոլոր ավտոտրանսպորտային միջոցներում ուղևորներին տեսանելի հատվածներում պարտադիր փակցվում են տեղեկատվական թերթիկներ:

## **2. Հավաքակայանների տարածքների կազմակերպումը**

- 1) Ավտոտրանսպորտային միջոցների հավաքակայանների տարածքում բացառվում են մարդկանց կուտակումները:
- 2) Հավաքակայաններում առկա փակ տարածքները, սանհանգույցը, սննդի համար առանձնացված տարածքները, տարածքներում առկա նստարանները և ընդհանուր օգտագործման այլ գույքը ենթակա են ախտահանման առնվազն օրը 2 անգամ:
- 3) Ապահովվում են ձեռքերի վրացման հնարավորություններ՝ հոսող տաք և սառը ջրով, արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներով (դրա անհնարինության դեպքում՝ անմիջապես ախտահանման հնարավորությամբ), օճառով:

## **3. Ավտոտրանսպորտային միջոցների ախտահանումը**

- 1) Ավտոտրանսպորտային միջոցները ենթարկվում են պարբերական խորքային ախտահանման:
- 2) Երկար տարածությունների և երկարատև՝ ավելի քան 3 ժամ տևողությամբ յուրաքանչյուր երթուղիների ընթացքում և ավարտին՝ ուղևորներին իջեցնելուց հետո, իրականացվում է սրահի օդափոխություն, դռների բռնակների, նստարանների արմնկակալների (միջքաղաքային ավտոբուսներում նաև ծալովի սեղանիկների, անվտանգության գոտիների ամրակների, անհատական կառավարման վահանակների (լուսավորության, օդափոխության, ուղեկցողին կանչելու և այլն), նստելատեղերի, անհատական տեսամոնիտորների պլաստմասե/մետաղյա/ կաշվե և այլ մասերի, սանհանգույցի առկայության դեպքում՝ նաև դրա կանխարգելիչ ախտահանում ախտահանիչ անձեռոցիկներով (կամ ախտահանիչ միջոցների լուծույթներով) շփման կամ ցողման եղանակով:
- 3) Յուրաքանչյուր օրվա ավարտին իրականացվում է տրանսպորտային միջոցների եզրափակիչ ախտահանում մասնագիտացված կազմակերպությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: Տրանսպորտային միջոցի սրահի և բոլոր աղտոտված գոտիների եզրափակիչ ախտահանման ժամանակ օգտագործվում են՝
  - մեկանգամյա պաշտպանիչ զգեստ,
  - մեկանգամյա ձեռնոց,
  - դիմակ, պաշտպանիչ ակնոց կամ դեմքի վահանակ,
  - փակ կոշիկ կամ բախիլներ՝ ցայտելու բարձր ռիսկի ժամանակ կամ կենսաբանական հեղուկներով խիստ աղտոտված մակերեսների ժամանակ,

- անջրանցիկ պարկեր թափոնների համար:

- 4) Մաքրման համար չի օգտագործվում սեղմված օդ և/կամ ջուր ճնշման տակ, ինչպես նաև այլ մեթոդներ, որոնք կարող են առաջացնել վարակիչ նյութի ցայտում կամ տարածում անբոցոլի տեսքով: Փոշեկուլ օգտագործվում է միայն ճիշտ իրականացված ախտահանումից հետո:
- 5) Մաքրման և ախտահանման ավարտից հետո պաշտպանիչ հագուստը, կոշիկը, անհատական պաշտպանության միջոցները, մաքրման պարագաները հավաքվում են մակնշված բաքերի կամ պարկերի մեջ դրանց ախտահանումն իրականացնելու համար:

#### **4. Վարորդների համար կանոններ**

- 1) Իրականացվում է վարորդների ջերմաչափում հեռավար կամ անհատական օգտագործման ջերմաչափով օրական առնվազն 2 անգամ, որոնցից մեկը՝ աշխատանքի ներկայանալիս: Վարվում է ջերմաչափման գրանցամատյան՝ համաձայն սույն որոշման Հավելված 19-ի: Ջերմություն ունենալու դեպքում վարորդներին չի թույլատրվում դուրս գալ երթուղի, և այդ մասին անհապաղ տեղեկացվում է ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ՝ զանգահարելով 8003 համարով:
- 2) Վարորդները պարտադիր կրում են դիմակ, որոնք փոխվում են 3 ժամը մեկ պարբերականությամբ:
- 3) Վարորդների հանգստի և սնվելու համար ապահովվում են առանձնացված տարածքներ՝ ապահովելով միմյանց միջև 1.5-2 մետր սոցիալական հեռավորություն:

#### **5. Ուղևորների համար կանոններ**

- 1) Բացառվում է ուղևորների նստեցումն առանց դիմակ կրելու:
- 2) Երկարատև երթուղիների ժամանակ օգտագործվում է միայն անհատական տարաներով ջուր և մեկանգամյա սպասք: Իրականացվում է օգտագործված մեկանգամյա սպասքի, ինչպես նաև դիմակների, ախտահանիչ անձեռոցիկների հավաքում մեկանգամյա օգտագործման հերմետիկ փակվող պլաստիկ ծրարների/տոպրակների մեջ, որոնք աղբարկղի բացակայության դեպքում տեղավորվում են բեռնախցիկում՝ ժամանման վայրում հեռացնելու:

### **ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ**

#### **1. Ընդհանուր կանոններ**

- 1) Տրանսպորտային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) նշանակում է կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման միջոցառումների պատասխանատու (այսուհետ՝ Պատասխանատու), որն ապահովում է՝
  - սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների և հիգիենայի նորմերի պահպանման նկատմամբ պատշաճ հսկողությունը և կանոնների համար անհրաժեշտ պարագաների, նյութերի ու հարմարությունների առկայությունը,
  - առնվազն ախտահանումների և աշխատողների առողջական վիճակի մասին գրանցումների վարումը համապատասխան գրանցամատյանում՝ համաձայն սույն որոշման Հավելված 19-ի:
- 2) Կազմակերպությունը հնարավորինս ձեռնպահ է մնում կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի աշխատողներին աշխատանքի

ներգրավելուց՝ պահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված կանոնները: Գործատուն հավաստիանում է իր աշխատակցի՝ կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմում գտնվելու մասին աշխատողի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթի հիման վրա: Բարձր ռիսկային խմբի մեջ ներառված են՝

ա. Ընկճված իմունային համակարգ ունեցող անձինք,

բ. 65 տարեկան և բարձր տարիքի անձինք,

գ. քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք (շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքային քրոնիկ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, սրտի քրոնիկ անբավարարություն, երիկամների քրոնիկ հիվանդություն, լյարդի քրոնիկ հիվանդություն (հեպատիտ), քրոնիկ նյարդաբանական հիվանդություն (Պարկինսոնի հիվանդություն, ցրված սկլերոզ (MS), ուղեղային կաթված տարած), դ. շաքարային դիաբետ ունեցող անձինք:

- 3) Կազմակերպությունն ապահովում է աշխատողներին դիմակներով, միանգամյա օգտագործման անձեռոցիկով և ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչով:
- 4) Կազմակերպությունն ապահովում է անվտանգ վարվելականոնների և սանիտարահամաճարակային անվտանգության նորմերի վերաբերյալ աշխատակիցների և ուղևորների պատշաճ իրազեկումը, այդ թվում՝ տեսանելի վայրերում պաստառներ փակցնելու և/կամ այլ նախընտրելի միջոցներով՝ հիմք ընդունելով սույն որոշման հավելված N 18-ը: Շահագործվող բոլոր ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցներում ուղևորներին տեսանելի հատվածներում պարտադիր փակցվում են տեղեկատվական թերթիկներ:

## **2. Տրանսպորտի կազմակերպումը և ախտահանումը**

- 1) Սպասասրահները և բոլոր վագոնները պարտադիր ապահովվում են բավարար թվով ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչներով:
- 2) Սպասասրահներում բացառվում են մարդկանց խիտ կուտակումները:
- 3) Վագոններում ապահովվում է ուղևորների հնարավորինս նոսր նստեցում:
- 4) Սպասասրահներում նշանակվում են ուղևորների նստեցման համար պատասխանատուներ, որոնք կազմակերպում են ուղևորների նստեցումը: Մետրոպոլիտենի դեպքում մեկ երթուղու ընթացքում յուրաքանչյուր վագոնում ուղևորների առավելագույն քանակը չի կարող գերազանցել 70-ը:
- 5) Յուրաքանչյուր երթուղու ավարտին ուղևորներին իջեցնելուց հետո իրականացվում է վագոնների օդափոխություն, դռների բռնակների, նստարանների արմնկակալների (միջքաղաքային ավտոբուսներում նաև ծալովի սեղանիկների, անվտանգության գոտիների ամրակների, անհատական կառավարման վահանակների (լուսավորության, օդափոխության, ուղեկցողին կանչելու և այլն), նստելատեղերի, անհատական տեսամոնիտորների պլաստմասե/մետաղյա/կաշվե և այլ մասերի, սանհանգույցի կանխարգելիչ ախտահանում ախտահանիչ անձեռոցիկներով (կամ ախտահանիչ միջոցների լուծույթներով) շփման կամ ցողման եղանակով:
- 6) Օրական առնվազն 3 անգամ իրականացվում է կայարաններում տեղակայված տերմինալների ախտահանում ախտահանիչ միջոցների լուծույթներով:
- 7) Յուրաքանչյուր օրվա ավարտին իրականացվում է վագոնների, կայարանների և ընդհանուր օգտագործման տարածքների եզրափակիչ ախտահանում մասնագիտացված կազմակերպությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: Եզրափակիչ ախտահանման ժամանակ օգտագործվում են՝

- մեկանգամյա պաշտպանիչ զգեստ,
  - մեկանգամյա ձեռնոց,
  - դիմակ, պաշտպանիչ ակնոց կամ դեմքի վահանակ,
  - փակ կոշիկ կամ բախիլներ՝ ցայտելու բարձր ռիսկի ժամանակ կամ կենսաբանական հեղուկներով խիստ աղտոտված մակերեսների ժամանակ,
  - անջրանցիկ պարկեր թափոնների համար:
- 8) Մաքրման համար չի օգտագործվում սեղմված օդ և/կամ ջուր ճնշման տակ, ինչպես նաև այլ մեթոդներ, որոնք կարող են առաջացնել վարակիչ նյութի ցայտում կամ տարածում աերոզոլի տեսքով: Փոշեկուլ օգտագործվում է միայն ճիշտ իրականացված ախտահանումից հետո:
- 9) Մաքրման և ախտահանման ավարտից հետո պաշտպանիչ հագուստը, կոշիկը, անհատական պաշտպանության միջոցները, մաքրման պարագաները հավաքվում են մակնշված բաքերի կամ պարկերի մեջ դրանց ախտահանումն իրականացնելու համար:

### **3. Աշխատողների համար կանոններ**

- 1) Իրականացվում է աշխատողների ջերմաչափում հեռավար կամ անհատական օգտագործման ջերմաչափով օրական առնվազն 2 անգամ, որոնցից մեկը՝ աշխատանքի ներկայանալիս: Վարվում է ջերմաչափման գրանցամատյան՝ համաձայն սույն որոշման Հավելված 19-ի: Ջերմություն ունենալու դեպքում վարորդներին չի թույլատրվում դուրս գալ երթուղի, և այդ մասին անհապաղ տեղեկացվում է ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ՝ զանգահարելով 8003 համարով:
- 2) Աշխատողները և վարորդները պարտադիր կրում են դիմակ՝ հիմք ընդունելով սույն որոշման հավելված N 18-ը:
- 3) Աշխատողների հանգստի և սնվելու համար նախատեսվում են առանձնացված և օդափոխվող տարածքներ: Հանգիստը և սնունդը կազմակերպվում է այնպես, որ բացառվեն կուտակումները և աշխատողների միջև պահպանվի 1.5-2 մետր սոցիալական հեռավորություն:

### **4. Ուղևորների համար կանոններ**

- 1) Չի թույլատրվում ուղևորների մուտքը երկաթուղային կայարանի կամ մետրոպոլիտենի տարածք՝ առանց դիմակ կրելու:
- 2) Երկաթուղային տրանսպորտի դեպքում՝ նախքան նստեցումն իրականացվում է ուղևորների ջերմաչափում հեռավար կամ անհատական օգտագործման ջերմաչափով: Ջերմություն ունենալու դեպքում չի թույլատրվում ուղևորի նստեցումը, և այդ մասին անհապաղ տեղեկացվում է ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ՝ զանգահարելով 8003 համարով:



**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**  
**ԵՐԿԱՐԱՏԵՎ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ**  
**ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ**

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու պարտականությունն ամբողջ ծավալով կրում է գործատուն: Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու և աշխատողների համար անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ ապահովելու նպատակով բոլոր երկարատև խնամքի կազմակերպությունները՝ երեխաների և տարեցների շուրջօրյա խնամքի կենտրոններ և հոգեկան առողջության կենտրոններ, առաջնորդվում են ստորև ներկայացված հիմնական կանոններով:

**1. Աշխատանքի կազմակերպական ընդհանուր կանոններ.**

- 1) Երկարատև խնամքի կազմակերպության տնօրենի կողմից նշանակվում է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) վարակի հսկողության պատասխանատու (ով կարող է ստանձնել նաև օպերատիվ շտաբի դերը):
- 2) Ստեղծվում է վարակի հսկողության հանձնաժողով՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 3210-Ա հրամանի պահանջների:
- 3) Մշակվում և կազմակերպության տնօրենի հրամանով հաստատվում է վարակի հսկողության ծրագիր՝ ներառելով օպերատիվ պլանը, որտեղ ընդգրկվում են խնամյալի ընդունելության, մեկուսացման, տեսակավորման, բուժանձնակազմի և խնամյալի, ինչպես նաև շրջակա միջավայրի անվտանգության ապահովման միջոցառումները:
- 4) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման գործընթացի կազմակերպման պատասխանատուի կողմից կազմակերպվում և իրականացվում են դասընթացներ աշխատակիցների համար՝ անհատական պաշտպանության միջոցների (այսուհետ՝ ԱՊՄ) կիրառման, ձեռքերի հիգիենայի, շնչառական էթիկայի, կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) փոխանցման կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:
- 5) Կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի աշխատողներին արգելվում է ներգրավել աշխատանքում՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված կանոնները: Գործատուն հավաստիանում է իր աշխատակցի՝ կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբում գտնվելու մասին աշխատողի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթի հիման վրա: Բարձր ռիսկային խմբի մեջ ներառված են.

ա. ընկճված իմունային համակարգ ունեցող անձինք,

բ. 65 և բարձր տարիքի անձինք,

գ. քրոնիկ հիվանդություններ ունեցողները (շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքային քրոնիկ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, սրտի քրոնիկ անբավարարություն, երիկամների քրոնիկ հիվանդություն, լյարդի քրոնիկ

հիվանդություն (հեպատիտ), քրոնիկ նյարդաբանական հիվանդություն (Պարկինսոնի հիվանդություն, ցրված սկլերոզ (MS), ուղեղային կաթված տարած),

դ. շաքարային դիաբետ ունեցող անձինք:

6) Կազմակերպությունն ապահովվում է.

ա. ձեռքերի լվացման հնարավորություններով. բոլոր այն սենքերում, որտեղ իրականացվում է խնամյալի զննում՝ բժշկական միջամտություն հոսող տաք և սառը ջրով, արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներով (անհնարինության դեպքում՝ ախտահանման հնարավորությամբ), օճառով,

բ. աշխատակիցների և խնամյալների համար մեկանգամյա օգտագործման անձեռոցիկների, անհատական պաշտպանության միջոցների բավարար քանակությամբ,

գ. թափոնների հեռացման համար համապատասխան մակնշմամբ փակվող կափարիչով աղբամաններով.

7) Անձնակազմի կողմից խնամյալի խնամքի կամ բժշկական միջամտության ժամանակ կիրառվում է ԱՊՄ՝ դիմակ, ակնոց (հիմք ընդունելով սույն որոշման հավելված N 18-ը), ջրակայուն երկար արտահագուստ՝ խալաթ կամ, եթե արտահագուստը ջրակայուն չէ, ջրակայուն գոգնոց:

8) Բժշկական նշանակության իրերի մաքրումը, ախտահանումը, նախամանրէազերծումային մաքրումը և մանրէազերծումն իրականացվում են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի պահանջների:

9) Ապահովվում է բժշկական թափոնների անվտանգ գործածությունը՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանի:

10) Ցածր ռիսկայնությամբ բժշկական իրերի (ջերմաչափ, արյան նմուշառման բարձիկ, ստեթասկոպ) ախտահանումն իրականացվում է 700 էթիլ սպիրտով՝ յուրաքանչյուր պացիենտի հետ շփումից հետո:

11) Երկարատև խնամքի կազմակերպությունում տեղադրվում են իրազեկման և հիշեցման պաստառներ, հուշաթերթեր՝ աշխատակիցների, խնամյալների համար.

ա. պարբերաբար ձեռքերը լվանալու վերաբերյալ

բ. շնչառական (փռշտալու կամ հազալու ժամանակ) հիգիենայի կանոնների՝ արմունկը կիրառելու կամ անձեռոցիկ օգտագործելու և անձեռոցիկն անմիջապես աղբարկղ գցելու վերաբերյալ:

12) Երկարատև խնամքի կազմակերպության աշխատակիցները պահպանում են ձեռքերի հիգիենան՝ հատկապես աշխատանքային օրվա սկզբում, խնամյալների հետ շփումից առաջ և հետո, սանհանգույցից օգտվելուց հետո, ճաշ պատրաստելուց առաջ և հետո, ուտելուց առաջ.

13) Խնամյալները հաճախ լվանում են ձեռքերը.

14) Կազմակերպությունում COVID-19-ի տարածումը կանխարգելելու կամ նվազեցնելու համար ապահովվում է սոցիալական/ֆիզիկական հեռավորություն (առնվազն 1,5 մետր).

ա. արգելվում է այցելուների մուտքը երկարատև խնամքի կազմակերպություն.

բ. խմբային գործունեության ժամանակ պահպանվում է սոցիալական/ֆիզիկական հեռավորություն (եթե հնարավոր չէ, ապա դադարեցվում են խմբային գործողությունները),

գ. ապահովվում է սոցիալական/ֆիզիկական հեռավորություն խնամյալների սննդի ընդունման ժամանակ, եթե հնարավոր չէ, սրահները փակվում են և մատակարարվում է անհատական սնունդ՝ իրենց սենյակներում:

դ. ապահովվում է խնամյալների միջև առնվազն 1,5 մետր հեռավորություն, ե. խնամյալները և աշխատակիցները խուսափում են ֆիզիկական շփումից (օրինակ՝ ձեռքսեղմում, գրկախառնություն, համբուրվել և այլն):

## **2. Անձնակազմի համար կանոններ**

- 1) Աշխատանքը կազմակերպվում է աշխատակիցներին 14-օրյա հերթափոխով աշխատանքի ներգրավելու միջոցով, ընդ որում՝ նախատեսելով, որ 14-օրյա հերթափոխում ներգրավված աշխատողներն իրենց հանգստանալու և սնվելու համար ընդմիջումների, աշխատանքային օրերի միջև ընկած անընդմեջ հանգստի, ինչպես նաև ամենշաբաթյա անընդմեջ հանգստի ժամանակահատվածներում ևս պետք է գտնվեն հաստատությունում:
- 2) Յուրաքանչյուր հերթափոխից առաջ աշխատակիցները թեստավորվում են:
- 3) Անձնակազմը հրահանգավորվում է COVID-19-ի ախտանշանների առկայության դեպքում աշխատանքի չհաճախելու և անհապաղ բուժօգնության դիմելու մասին,
- 4) Օրը երկու անգամ՝ կազմակերպություն մուտք գործելիս և աշխատանքային օրվա կեսին, չափվում է բոլոր աշխատակիցների ջերմությունը՝ հեռավար կամ անհատական ջերմաչափով՝ կատարելով գրառումներ գրանցամատյանում՝ համաձայն սույն որոշման հավելված N 19-ի:
- 5) Աշխատակցի մոտ COVID-19-ի ակնհայտ ախտանիշների առկայության դեպքում անմիջապես կասեցվում է նրա աշխատանքը և անհապաղ ահազանգվում է Առողջապահության նախարարությանը՝ 8003 հեռախոսահամարով,
- 6) Աշխատանքային պարտականությունները կատարելիս աշխատակիցները պարտադիր կրում են մեկանգամյա օգտագործման դիմակներ՝ հիմք ընդունելով սույն որոշման հավելված N 18-ը:
- 7) Մայրապետները, աղտոտված անկողնային պարագաների հետ գործ ունեցողները, լվացքատան աշխատողները և այլք կրում են ԱՊՄ՝ ներառյալ դիմակ (հիմք ընդունելով սույն որոշման հավելված N 18-ը), երկար թևազգեստներ, ակնոցներ կամ դեմքի վահան, համապատասխան կոշիկներ կամ բախիլներ՝ հետևելով ԱՄՊ-ի կիրառման հրահանգին,
- 8) Անձնակազմի համար ապահովվում են հանգստի, սնվելու պայմաններ, անհրաժեշտության դեպքում նրանց ցուցաբերվում է հոգեբանական աջակցություն,
- 9) Անձնակազմը ստանում է ճշգրիտ տեղեկատվություն կազմակերպությունում համաճարակային իրավիճակի մասին:

## **3. Խնամյալների համար կանոններ**

- 1) Խնամյալների և անձնակազմի շրջանում գնահատվում է կազմակերպություն ընդունվող ցանկացած նոր խնամյալի առողջական վիճակը՝ շնչառական հիվանդության, մասնավորապես՝ COVID-19-ի ախտանշանների՝ ներառյալ ջերմության, հազի կամ շնչառության խանգարումների առկայությունը:
- 2) Օրական երկու անգամ չափվում է յուրաքանչյուր խնամյալի ջերմությունը՝ հեռավար կամ անհատական (որոնք ենթարկվում են ախտահանման յուրաքանչյուր կիրառումից հետո) ջերմաչափով, ստուգվում է հազի կամ շնչառության խանգարման առկայությունը:
- 3) COVID-19-ի ախտանշանների առկայության դեպքում տվյալ խնամյալների մասին անհապաղ տեղեկացվում է կազմակերպության պատասխանատուն:
- 4) Խնամյալի մոտ հիվանդության կասկածի կամ ախտորոշման դեպքում ձեռնարկվում են հետևյալ քայլերը.

ա. կասկածելի դեպքի մասին անհապաղ ահազանգում են Առողջապահության նախարարությանը՝ զանգահարելով 8003 հեռախոսահամարով, և մեկուսացնում

շնչառական ախտանիշներ ունեցող խնամյալին (համաձայն դեպքի ստանդարտ բնորոշման՝ ըստ 2020թ. մարտի 5-ի N 877-Ա՝ «2020 թվականի հունվարի 31-ի թիվ 336-Ա հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի) բնական օդափոխությամբ (160 լիտր/վայրկյան) ապահովված սենք-մեկուսարանում,

բ. խնամյալը և նրա հետ նույն սենյակում գտնվողները կրում են դիմակ,

գ. կասկածելի դեպքերի համար կազմակերպվում է լաբորատոր թեսթավորում՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19 –ի) հետազոտություն,

դ. կորոնավիրուսային հիվանդության (COVID-19 –ի) դրական թեստի արդյունքում անհապաղ ահազանգում են Առողջապահության նախարարություն,

ե. ռիսկի խմբերի շրջանում գնահատվում է հիվանդության ծանրությունը՝ հիվանդներին բժշկական կազմակերպություն տեղափոխելու համար: Եթե տեղափոխումը հնարավոր չէ, քրոնիկ հիվանդները կարող են մեկուսացվել և խնամվել կազմակերպության պայմաններում:

- 5) COVID-19- ով կասկածելիները և հաստատված դեպքերը, ինչպես նաև նրանք և ընկճված իմունիտետով խնամյալները չեն տեղակայվում նույն սենյակում:
- 6) Արգելվում է COVID-19- ով կասկածելիների և հաստատված դեպքերի՝ իրենց համար նախատեսված սենյակները լքելը:
- 7) COVID-19-ով կասկածելի կամ հաստատված խնամյալների հետ աշխատող բժշկական անձնակազմին տրամադրվում են առանձին բժշկական պարագաներ (օրինակ՝ ջերմաչափներ, տոնոմետրեր, պուլսօքսիմետր և այլն), որոնք չեն կիրառվում այլ խնամյալների կողմից:
- 8) Բոլոր բժշկական սարքավորումները մաքրվում և ախտահանվում են նախքան մեկ այլ հիվանդի համար նորից օգտագործելը:
- 9) Արգելվում է անձնական սարքերի և պարագաների (շարժական սարքեր, գրքեր, էլեկտրոնային հարմարանքներ) օգտագործումը այլ խնամյալների կողմից:
- 10) Սահմանափակվում է խնամյալների տեղաշարժը կամ տեղափոխումը՝ բացառությամբ խիստ անհրաժեշտ ախտորոշիչ և բուժական միջոցառումների:
- 11) Տեղափոխման անհրաժեշտության դեպքում, տրանսպորտային ծառայությանը և ընդունող կազմակերպության անձնակազմն ապահովվում է նախազգուշական միջոցների մասին հրահանգներով:
- 12) Խնամյալները, ովքեր խիստ անհրաժեշտ պատճառներով լքում են իրենց սենյակը, կրում են դիմակ՝ հիմք ընդունելով սույն որոշման Հավելված 18-ը և խստորեն պահպանվում շնչառական հիգիենան:
- 13) COVID-19-ի հաստատված հիվանդները, կազմակերպությունում բուժվելու դեպքում մինչև լաբորատոր հետազոտության բացասական արդյունքը գտնվում են մեկուսացման պայմաններում: Թեստավորումն անհնարինության դեպքում հիվանդները ախտանշանների վերանալուց հետո շարունակում են ինքնամեկուսացվել երկու շաբաթ:
- 14) Տարեցները, հատկապես մեկուսացման մեջ գտնվողները, ճանաչողական խանգարում, թուլամտություն և խիստ խնամքից կախվածություն ունեցողները, ովքեր ունեն ԱՊՄ կրելու կամ մեկուսացման պայմաններում ապրելու դժվարություններ, ստանում են հոգեբանական աջակցություն:

#### 4. Տարածքի ախտահանման կանոնները”

- 1) Օրական 2 անգամ՝ աշխատանքային օրվա ընթացքում՝ ֆիքսված ժամի և ավարտին, ախտահանում են տարածքը, սանհանգույցները, դռների բռնակները, բազրիքները, սեղանները, ձեռքով հաճախակի հպման մակերեսները (սարքերի մակերեսներ, լույսի անջատիչներ, սարքավորումների բռնակներ, հեռակառավարման վահանակներ, ընդհանուր օգտագործման հեռախոսներ, համակարգիչներ, ստեղնաշարեր և մկնիկեր և այլն)՝ քլորի հիմքով կամ 60-80% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերի կիրառմամբ՝ նյութին կից մեթոդական ուղեցույցին համապատասխան:
- 2) Ախտահանման աշխատանքները գրանցվում են համապատասխան գրանցամատյանում՝ համաձայն սույն որոշման հավելված N 19-ի:
- 3) Աղտոտված սպիտակեղենը տեղադրում են հստակ պիտակավորված, հերմետիկ փակվող պարկերի կամ բեռնարկղերի մեջ, պինդ արտաթորանքը մանրակրկտորեն հեռացվում է և տեղադրվում ծածկված դույլի մեջ՝ հետագայում թափվելու համար:
- 4) Սպիտակեղենը լվանում են լվացքի մեքենայով միջոցով 60-90°C ջերմաստիճանում՝ կիրառելով համապատասխան լվացքի պարագաներ: Լվացքը այնուհետև չորացնում են սովորական ընթացակարգերի համաձայն:
- 5) Լվացքի մեքենայով լվանալու հնարավորության բացակայության դեպքում, սպիտակեղենը ընկղմում են օճառով և տաք ջրով լցված մեծ տարողության մեջ, խառնում փայտով՝ զգուշանալով թափվելուց և ցայտոցներից: Դրանից հետո տարողությունը դատարկում են, և սպիտակեղենը ներծծում 0,05% քլոր պարունակող հեղուկով՝ մոտավորապես 30 րոպե: Վերջում սպիտակեղենը լվանում են մաքուր ջրով և չորացնում կամ արևի տակ, կամ ըստ ընդունված ընթացակարգերի:

**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**  
**ՀԱՎԵԼՎԱԾ N 2-15-ՈՎ ՉԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ**  
**ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19)**  
**ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ**

Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու պարտականությունն ամբողջ ծավալով կրում է գործատուն: Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու և աշխատողների համար անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ ապահովելու նպատակով կազմակերպությունները առաջնորդվում են ստորև ներկայացված հիմնական կանոններով:

1. Անհրաժեշտ է ապահովել պայմաններ՝ ձեռքերի կանոնավոր և մանրակրկիտ լվացման (լվացարաններ), չորացման համար: Աշխատավայրում ապահովվում է ջրի և օճառի, ակոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչների, դիմակների առկայությունը:
2. Աշխատատանքային պարտականությունները կատարելիս աշխատակիցները կրում են դիմակներ՝ հիմք ընդունելով սույն որոշման հավելված N 18-ը:
3. Ապահովվում է յուրաքանչյուր 10 աշխատողի հաշվարկով առնվազն մեկ ջրի ծորակի առկայություն:
4. Ապահովվում են փակվող աղբամաններ՝ օգտագործված դիմակները նետելու համար:
5. Յուրաքանչյուր աշխատակցի ջերմությունը չափվում է օրական նվազագույնը երկու անգամ (հեռավար կամ անհատական օգտագործման ջերմաչափներով, այդ թվում՝ աշխատակիցների անձնական ջերմաչափներով), որից մեկը աշխատակցի աշխատանքի ներկայանալու ժամանակ՝ կատարելով համապատասխան նշումներ գրանցամատյանում՝ համաձայն սույն որոշման հավելված N 19-ի:
6. ՀՀ առողջապահության նախարարի՝ 2020 թվականի մարտի 16-ի N 977-Ա հրամանի համաձայն՝ անհրաժեշտ է սահմանել կանոններ և ընթացակարգեր՝ օրական առնվազն երկու անգամ սահմանված ժամերի ախտահանելու տարածքը՝ դռների բռնակները, սեղանները, ձեռքով հաճախակի հպման մակերեսները (սարքերի մակերեսներ, լույսի անջատիչներ, սարքավորումների վրայի բռնակները, հեռակառավարման վահանակներ, ընդհանուր օգտագործման հեռախոսներ, համակարգիչներ, ստեղնաշարեր և մկնիկներ, բանկերում և այլ կազմակերպություններում՝ հաճախորդների կամ տարբեր անձանց կողմից օգտագործվող գրիչներ և այլն), սանհանգույցները, ձեռքերի հպման համար նախատեսված մակերեսները:
7. Ախտահանման համար կիրառվում են քլորի հիմքով կամ 60-80% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութեր՝ նյութին կից մեթոդական ուղեցույցին համապատասխան:
8. Հնարավորինս խուսափում են կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի աշխատողներին աշխատավայր կանչելուց, այդ թվում՝ պահպանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված կանոնները: Գործատուն հավաստիանում է իր աշխատակցի՝ կորոնավիրուսի ծանր

հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմում գտնվելու մասին աշխատողի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթի հիման վրա: Բարձր ռիսկային խմբի մեջ ներառված են՝

ա. 65 և բարձր տարիքի անձինք

բ. ընկճված իմունային համակարգ ունեցող անձինք,

գ. քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք (շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքային քրոնիկ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, սրտի քրոնիկ անբավարարություն, երիկամների քրոնիկ հիվանդություն, լյարդի քրոնիկ հիվանդություն (հեպատիտ), քրոնիկ նյարդաբանական հիվանդություն (Պարկինսոնի հիվանդություն, ցրված սկլերոզ (MS), ուղեղային կաթված տարած),

դ. շաքարային դիաբետ ունեցող անձինք:

9. Անհրաժեշտ է ապահովել աշխատատեղերի՝ միմյանցից նվազագույնը 1.5 մետր հեռավորությունը: Այն կազմակերպություններում, որտեղ աշխատանքային տարածքը հնարավորություն չի տալիս պահպանել սոցիալական հեռավորությունը, արտակարգ դրության ժամանակահատվածում, պետք է սահմանվի հերթափոխային աշխատանք << աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգավորումներին համապատասխան: Յուրաքանչյուր աշխատանքային հերթափոխից հետո աշխատանքային տարածքում պետք է իրականացվեն ախտահանիչ միջոցառումներ:
10. Անձնական (դրսի և տնային) և աշխատանքային հագուստի պահպանման համար պետք է ապահովել արտահագուստի (սանիտարական հագուստի) համար նախատեսված հանդերձապահարաններ:
11. Անհրաժեշտ է հնարավորինս սահմանափակել ներգնա և արտագնա գործուղումները:
12. Հարգելի են համարվում սուր շնչառական վարակներին բնորոշ ախտանշաններով (թեթև հազ, ջերմության բարձրացում) աշխատակիցների բացակայությունն աշխատանքից, բացառել վերջիններիս մուտքը աշխատավայր, իսկ եթե ախտանիշները ի հայտ են գալիս աշխատանքի ընթացքում, պետք է անհապաղ հայտնել << առողջապահության նախարարություն և ապահովել աշխատողի մեկուսացումը:
13. Աշխատավայրում վիրուսով ախտահարված աշխատակից ունենալու մասին տեղեկատվություն ստանալու դեպքում անհրաժեշտ է անհապաղ առանձնացնել այն անձանց շրջանակը, ովքեր շփում են ունեցել վարակակիր անձի հետ և հայտնել << առողջապահության նախարարությանը՝ զանգահարելով 8003 հեռախոսահամարով:
14. Աշխատավայրում վարակի կասկածով աշխատակից ունենալու դեպքում պետք է զանգահարել Առողջապահության նախարարության թեժ գիծ՝ 8003 հեռախոսահամարով, հնարավորության դեպքում անմիջապես ախտահանել այն տարածքը, որտեղ աշխատել է աշխատակիցը, ինչպես նաև ցանկացած այլ տարածք և մակերես, որը կարող էր հասանելի լինել տվյալ աշխատակցին:
15. Անհրաժեշտության դեպքում պետք է ապահովել մեկուսացված անձանց հեռավար աշխատանքի հնարավորությունը:
16. Աշխատակիցներին անհրաժեշտ է իրազեկել անվտանգ վարվելականոնների և սանիտարահամաճարակային անվտանգության նորմերի վերաբերյալ, այդ թվում՝ տեսանելի վայրերում պաստառներ փակցնելու և/կամ այլ նախընտրելի միջոցներով՝ հիմք ընդունելով սույն որոշման հավելված N 18-ը:





**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**  
**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ**  
**(COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ**

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու նպատակով հոգեհանգստի և հուղարկավորության արարողությունների կազմակերպման ընթացքում առաջնորդվում են ստորև ներկայացված հիմնական կանոններով:

1. Հոգեհանգստի և հուղարկավորության արարողությունների ժամանակ ապահովվում է ոստիկանությունից և մարզպետարանից/տեղական ինքնակառավարման մարմնից մեկական ներկայացուցչի ներկայությունն արարողությանը:
2. Այդ նպատակով Երևանի քաղաքապետարանը և մարզպետարանները ճշտում են արարողության վայրն ու ժամը և առնվազն մեկ օր առաջ այդ մասին տեղեկացնում Ոստիկանությանը:
3. Հոգեհանգստի և հուղարկավորության արարողության ժամանակ ոստիկանության, մարզպետարանի/տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչները սգո ծառայություններ մատուցող կազմակերպության աշխատակիցների կամ եկեղեցու սպասավորների հետ համագործակցությամբ ապահովում են մարդկանց կուտակումները բացառող միջոցառումների իրականացումը: Մասնավորապես՝
  - 1) Արգելվում է արարողության անցկացման սրահում միաժամանակ 10 հոգուց ավել անձանց ներկայությունը, ապահովվում է ներկաների միջև առնվազն 1.5 մետր սոցիալական հեռավորություն.
  - 2) Աթոռները տեղակայվում են միմյանցից 1.5 մետր հեռավորության վրա.
  - 3) Արգելվում է արարողության սրահից կամ եկեղեցուց դուրս բակային հատվածում տվյալ արարողությանը մասնակից 20 հոգուց ավել անձանց ներկայությունը, այդ թվում՝ միմյանցից առնվազն 1.5 մետր սոցիալական հեռավորության պահպանմամբ.
  - 4) Արարողության բոլոր մասնակիցները կրում են դիմակներ:
  - 5) Բացառվում են անձանց միջև սերտ շփումները, գրկախառնությունները:
  - 6) Արգելվում է համբուրել, դիպչել մահացածի մարմնին:
  - 7) Ոստիկանության ներկայացուցիչն իրավունք ունի արգելելու կորոնավիրուսին բնորոշ առերևույթ ախտանշաններով (հազ, հարբուխ, դժվարաշնչություն) անձանց մասնակցությունը արարողությանը:
4. Հոգեհանգստի արարողությունը սգո ծառայություններ մատուցող կազմակերպություններում կամ եկեղեցիներում իրականացնելու դեպքում ծառայություն մատուցողի կողմից նշանակվում է պատասխանատու:
5. Պատասխանատուն ապահովում է՝

- ա. սգո ծառայություններ մատուցող կազմակերպության կամ եկեղեցու ողջ տարածքում ընդհանուր սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների և հիգիենիկ նորմերի պահպանման նկատմամբ պատշաճ հսկողությունը և կանոնների համար անհրաժեշտ պարագաների, նյութերի ու հարմարությունների առկայությունը:
- բ. ախտահանումների և աշխատողների առողջական վիճակի մասին գրանցումների վարումը՝ համաձայն սույն որոշման Հավելված 19-ի:
- գ. անվտանգ վարվելականոնների և սանիտարահամաճարակային անվտանգության նորմերի վերաբերյալ աշխատողներին պատշաճ իրազեկումը:
6. Ապահովվում են հոգեհանգստի/հուղարկավորության արարողության համար նախատեսված վայրի ընդհանուր մուտքի, սանհանգույցի, առանձին սենքերի մոտ ախտահանիչներով (ալկոհոլային հիմքով) տարողություններ, անձեռոցիկներ և փակվող աղբարկղեր:
  7. Ապահովվում է հոգեհանգստի/հուղարկավորության արարողության համար նախատեսված տարածքում ձեռքերի լվացման հնարավորություն՝ հոսող տաք և սառը ջրով, արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներով (դրա անհնարինության դեպքում՝ անմիջապես ախտահանման հնարավորությամբ), օճառով, ընդ որում՝ այնպես, որ բացառվեն մասնակիցների կուտակումները: Արգելվում է թաղումից հետո լվացվելիս ընդհանուր սրբիչով ձեռքերը չորացնելը:
  8. Ապահովվում է հոգեհանգստի արարողության համար նախատեսված վայրի բնական օդափոխությունը՝ յուրաքանչյուր երկու ժամը մեկ:
  9. 2-4 ժամը մեկ ֆիքսված ժամերի ախտահանվում են հոգեհանգստի արարողության համար նախատեսված վայրի դռների բռնակները, սեղանները, ձեռքով հաճախակի հպման մակերեսները, սանհանգույցները, ձեռքերի հպման համար նախատեսված մակերեսները քլորի հիմքով կամ առնվազն 60-80% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերի կիրառմամբ՝ նյութին կից մեթոդական ուղեցույցին համապատասխան:
  10. Արգելվում է կորոնավիրուսին բնորոշ ախտանշաններով (ջերմություն, հազ, հարբուխ, դժվարաշնչություն) մասնակիցների մասնակցությունը հոգեհանգստի/հուղարկավորության արարողությանը:
  11. Հոգեհացի կազմակերպման ընթացքում առաջնորդվում են հանրային սննդի օբյեկտներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման սանիտարահամաճարակաբանական կանոններով՝ համաձայն սույն որոշման հավելված N 7-ի:
  12. Հոգեհանգստի համար նախատեսված վայրից մասնակիցների գերեզմանատուն, այնուհետև հոգեհացի սրահ տեղափոխման ընթացքում պահպանվում են սույն որոշման հավելված N 14-ով սահմանված կանոնները:

**ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ  
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1. Ի՞նչ է կորոնավիրուսը:**

Նոր կորոնավիրուսը դասվում է կորոնավիրուսների ընտանիքին, որն ունի կենդանական ծագում և այժմ փոխանցվում է մարդուց մարդ: Այն առաջացնում է շնչառական հիվանդություն արդեն վարակված հիվանդի հազալու կամ փռշտալու հետևանքով առաջացած կաթիլի հետ շփման արդյունքում:

**2. Որո՞նք են ախտանշանները:**

Ախտանշանները ներառում են (բայց չեն սահմանափակվում)՝ բարձր ջերմություն, հազ, կոկորդի ցավ, թուլություն և դժվարացած շնչառություն: Վարակված անձանց մի մասը կարող է չունենալ որևէ ախտանշան, մի մասի մոտ հիվանդությունը կարող է ընթանալ շատ մեղմ, և նրանք կարող են հեշտությամբ ապաքինվել: Մյուս մասի մոտ կարող է ընթանալ շատ ծանր և կայծակնային:

**3. 3.Ինչպե՞ս է տարածվում վիրուսը:**

Վիրուսը տարածվում է մարդուց մարդ՝

- 1) կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդի հետ սերտ շփման արդյունքում:
- 2) կորոնավիրուսային հիվանդությամբ հաստատված հիվանդի հազալու կամ փռշտալու հետևանքով առաջացած կաթիլի հետ շփման ուղիով, կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդի հազալու կամ փռշտալու հետևանքով առաջացած կաթիլներով աղտոտված մակերեսներին կամ առարկաներին (օրինակ՝ դռան բռնակներ կամ սեղաններ) դիպչելու, այնուհետև՝ բերանին կամ դեմքին դիպչելու հետևանքով:

**4. Որքա՞ն ժամանակ անձը կարող է լինել վարակիչ այլոց համար**

Առողջապահության նախարարությունը ներկայումս առաջարկում է 14-օրյա ինքնամեկուսացում՝ արտերկրից ժամանածների և կորոնավիրուսային հիվանդությամբ հաստատված դեպքի հետ սերտ շփում ունեցած անձանց համար:

**4. Ովքե՞ր են գտնվում ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբում**

- 1) 65 և բարձր տարիքի անձինք,
- 2) ընկճված իմունային համակարգ ունեցող անձինք,
- 3) քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք (շնչառական հիվանդություններ՝ ասթմա, թոքային քրոնիկ հիվանդություն (COPD), էմֆիզեմա կամ բրոնխիտ, սրտի քրոնիկ անբավարարություն, երիկամների քրոնիկ հիվանդություն, լյարդի քրոնիկ հիվանդություն (հեպատիտ), քրոնիկ նյարդաբանական հիվանդություն (Պարկինսոնի հիվանդություն, ցրված սկլերոզ (MS), ուղեղային կաթված տարած),

- 4) շաքարային դիաբետ ունեցող անձինք,
- 5) մանկահասակ երեխաներ և նորածիններ

**5. Կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելուց խուսափելու համար անհրաժեշտ է՝**

- 1) Խուսափել այլ անձանց հետ սերտ շփումներից՝ ձեռքով բարևելուց, համբուրելուց, գրկախառնվելուց,
- 2) Փռշտալիս կամ հազալիս փակել բերանն ու քիթն անձեռոցիկով կամ արմնկային ծալքի հատվածով (ոչ դաստակով),
- 3) Օգտագործած անձեռոցիկն անմիջապես նետել փակ աղբարկղը,
- 4) Հաճախակի լվալ ձեռքերն օճառով և ջրով՝ առնվազն 20 վայրկյան, անհնարինության դեպքում ձեռքերը մաքրել ալկոհոլային հիմքով ախտահանիչներով,
- 5) Կրել դիմակներ և ձեռնոցներ, իսկ հաճախորդների հետ շփումների ժամանակ ցանկալի է նաև արտահագուստ (սանիտարական հագուստ),
- 6) Դիմակը հագնելուց առաջ ձեռքերը մշակել ալկոհոլի հիմքով ախտահանիչ/հականեխիզ միջոցով կամ լվանալ օճառով: Դիմակն այնպես կրել, որպեսզի այն փակի քիթը և բերանը՝ առանց դեմքի և դիմակի միջև ճեղքերի: Չհավել դիմակին օգտագործման ժամանակ, հավելու դեպքում ձեռքերը մշակել սպիրտ պարունակող միջոցով և լվանալ օճառով: Չկրել խոնավացած դիմակ և կրկնակի չօգտագործել մեկանգամյա օգտագործման դիմակները: Դիմակը հանելիս բռնել կապիչներից (չհավելով դիմակի առաջային մասին) և անմիջապես նետել թափոնների համար նախատեսված փակվող աղբարկղի մեջ, մշակել ձեռքերը սպիրտ պարունակող միջոցով կամ լվանալ օճառով:
- 7) Խուսափել աչքերին, քթին, բերանին դիպելուց,
- 8) Խուսափել շնչառական վարակի ախտանիշ ունեցող անձանց հետ սերտ շփումից, իսկ անխուսափելի շփման դեպքում օգտագործել դիմակ և պահպանել առնվազն 2 մետր հեռավորություն,
- 9) Յուրաքանչյուր աշխատակցի համար դիտարկել օգտագործման տարածքն ախտահանելու համար անհատական պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտությունը:

**6. Աշխատողի մոտ կորոնավիրուսային հիվանդության ախտանշանների առկայության դեպքում անհրաժեշտ է՝**

- 1) Աշխատողի մոտ թեթև հազի, ջերմության բարձրացման կամ ինքնազգացողության վատթարացման դեպքում ապահովել վերջինիս անհապաղ մեկուսացումը և բժշկական օգնության դիմելը,
- 2) Անհապաղ քայլեր ձեռնարկվել իր հետ շփում ունեցած անձանց շրջանակը պարզելու, նշված անձանց մեկուսացնելու և այդ մասին ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ տեղեկացնելու ուղղությամբ՝ զանգահարելով 8003 համարով,
- 3) Ապահովել անմիջական աշխատանքային և ցանկացած այլ՝ նրան հասանելի տարածքի կամ շփման մակերեսի անհապաղ ախտահանումը:

**ՁեՎ 1. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ**

**Անձնակազմի ջերմաչափման և առողջական վիճակի վերաբերյալ զննման արդյունքների գրանցման**

ՀՀ.	Աշխատակցի Ա.Ա.Հ.	Աշխատակցի պաշտոն, ստորաբաժանում	Ջերմաչափում		Ջերմաչափման արդյունք	Զննում	Զննման արդյունք (հազ, դժվարացած շնչառություն, այլ՝ նշել)	Իրականացված միջոցառում
			Ժամը	Ժամը				
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.

**ՁեՎ 2. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ**

**Ախտահանման գործընթացի վերաբերյալ գրանցումների**

ՀՀ.	Ամսաթիվ	Ախտահանվել է (նշել ախտահանված տարածքը, մակերեսը)	Ախտահանիչ միջոցի անվանումը, աշխատանքային լուծույթի տոկոսը	Ախտահանման ժամը	Խոնավ մաքրման ժամը	Ախտահանիչի աշխատանքային լուծույթի պահածամը	Ախտահանողի ստորագրությո- ւունը
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.

X

S. ԱՎԻՆՅԱՆ